ՀՀ նախագահական ընտրություններ, 2013

ՀՀ Նախագահի թեկնածու

ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Նոր Հայացք՝ Նոր Կենսակերպ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախընտրական ծրագրի իրականացման նպատակն է.

- վերացնել Հայաստանի Հանրապետությունում գործող պետական կառավարման կոռուպցիոն համակարգը,
- բացառել պետական պաշտոնի և բիզնես գործունեության համատեղումը,
- հասնել նրան, որ Հայաստանի դատական համակարգը գործի իշխանության մյուս ճյուղերից անկախ և ի զորու լինի ապահովել արդարադատության կենսագործումը՝ ղեկավարվելով երկրի օրենքներով և արդարամտությամբ,
- ապահովել գործատուի և աշխատողի շահերի և օրինական իրավունքների գործուն պաշտպանությունն ու նրանց փոխադարձ ընկալումը,
- ապահովել սպառողների՝ որակյալ ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու իրավունքը,
- սկսել ազգային հարստության բաշխման ներկայում գոյություն ունեցող համամասնության փոփոխության գործընթացը: Այդ սկզբունքները ենթադրում են, որ ՀՀ քաղաքացիները կարող են ստանալ նաև ազգային հարստություն հանդիսացող բնական պաշարների և այլ ռեսուրսների արդյունահանման և օգտագործման արդյունքում ստացված եկամուտների իրենց մասնաբաժինը,
- ապահովել գիտակրթական ոլորտի նպատակային ու հետևողական զարգացումը պետության կողմից ընդունված չափանիշներին համապատասխան: Միաժամանակ քաջալերել ցանկացած նորարարություն և ստեղծագործ նախաձեռնողականություն, դրանց հանդեպ ձևավորել հանրային հանդուրժողականության և համակրանքի մթնոլորտ,
- լիարժեք ապահովել խոսքի ազատության իրավունքի իրականացումը և բացառել հանրային հեռուստատեսության, հանրային ռադիոյի, հանրային այլ լրատվամիջոցների միակողմանի և կանխակալ գործունեությունը,
- բացառել մենաշնորհները, տնտեսությունը դարձնել մրցակցային,
- բացառել օտարերկրյա ու տեղական ներդրողների նկատմամբ մինչ այժմ կիրառվող պաշտոնական դրամաշորթության պրակտիկան: Հայաստանում ներդրում կատարող ցանկացած անձի կամ ձեռնարկության բիզնես շահերը պետք է

գործնականում հարգվեն ու պաշտպանված լինեն,

- ՀՀ տարածքում իրականացվող ցանկացած գործունեություն, որի արդյունքում բնությանն ու շրջակա միջավայրին վնաս կարող է հասցվել, պետք է ենթարկվի պետական ու հասարակական մշտական մասնագիտական վերահսկողության,
- կկարևորվեն պետական կառավարման համակարգի աշխատակիցների մասնագիտական և մարդկային որակները, այլ ոչ թե նրանց տարաբնույթ անձնական և ազգակցական կապերն ու ֆինանսական հնարավորությունները:
- Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն կունենան լիարժեք մասնակցել պետական կառավարման ոլորտի աշխատանքներին՝ սեփական ներդրումը բերելով պետական շինարարության, բոլորիս համար կարևոր, ոլորտում:

ՄԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

<u>ԴՐՈՒՅԹ ԱՌԱՋԻՆ</u>

Մինչ այժմ ընտրությունների ելքը որոշվում էր հենց քվեարկության օրը: Իշխանության խնդիրն էր լինում ընդդիմությանը համոզել մասնակցել քվեարկությանը

Մենք ընտրությունների իրավաչափությունը ճանաչելու նախապայման ունենք, որը պետք է իշխանությունների կողմից բավարարվի՝ իշխանությունները պետք է տեղեկացնեն հանրությանը, թե.

- **Հայաստանում որքան ընտրող է մնացել բազմամյա ահազնացող արտագաղթի արդյունքում,**
- **ՀՀ անկախացումից ի վեր այլ պետություններում մշտապես բնակվող մեր հայրենակիցներից քանիսն են ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն,**
- **քանիսն են հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից:**

Այս տվյալների հրապարակումը կարող է կանխել ներկայումս ՀՀ սահմաններից դուրս բնակվող, ուստի և, քվեարկելու իրական հնարավորությունից զրկված մեր քաղաքացիների ձայները հօգուտ իշխանական թեկնածուի օգտագործումը:

Մենք պնդում ենք, որ թեև, ըստ պաշտոնական տվյալների ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը կազմում է մոտ 2,5 միլիոն մարդ, շուրջ մեկ միլիոն ընտրող քվեարկությանը չի մասնակցելու, քանի որ գտնվում է Հայաստանից դուրս, իսկ Հայաստանում գտվողների առնվազն 15-20 տոկոսն էլ տարբեր պատճառներով չի մասնակցելու ընտրություններին: Սա նշանակում է, որ.

- **եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված ընտրությունների մասնակիցների քանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները գերազանցեն 1,3 միլիոնը, ապա ընտրությունները կարելի է կեղծված և չկայացած համարել:**

Սա ընտրությունների իրավաչափությունն ապահովելու և հաստատելու քաղաքական ուղին է: Մենք այս ուղին ենք ընտրել, որովհետև, մեր համոզմամբ, Հայաստանը.

- **իրավական պետություն չէ՝ իրավական նորմերի կիրառումն ու դատական համակարգի գործունեությունը սպասարկում են իշխանական բարձրագույն պաշտոններում գտնվող անհատների անձնական շահերը և սովորաբար հակասում են հանրային շահերին:**

Այդ իսկ պատճառով մենք ոչ մի հարցով չենք դիմելու ՀՀ դատական ատյաններին:

<u>ԴՐՈՒՅԹ ԵՐԿՐՈՐԴ</u>

Ընդդիմությունը մշտապես խնդիր է դրել ապացուցելու, որ հենց իր թեկնածուն է հաղթել ընտրություններում, բայց իշխանության կողմից իրականացված համատարած կեղծիքների և բռնաճնշումների միջոցով հաջողվել է խեղաթյուրել ընտրությունների արդյունքները և սեփական պարտությունը ներկայացնել որպես հաղթանակ:

Մեր մարտավարության նպատակը ոչ թե.

- **սեփական թեկնածուի հաղթանակի ամեն գնով հաստատումն է,**

այլ.

- **ընտրությունների իրավաչափության ապահովումն՝ անկախ նրանից, թե քվեարկության արդյունքում ով կճանաչվի հաղթող:**

<u>ԴՐՈՒՅԹ ԵՐՐՈՐԴ</u>

Մինչև հիմա ընդդիմության մարտավարությունը կայանում էր նրանում, որ մարդկանց ասվում էր.

”Ձեր ձայները տվեք մեզ, իսկ մենք դրանց տեր կկանգնենք ընտրատեղամասերում, քանի որ ունենք շատ ակտիվ կողմնակիցներ, որոնք թույլ չեն տա, որ իշխանությունը յուրացնի կամ անտեսի մեր օգտին տված Ձեր քվեն”:

Արդյունքում.

- քվեարկության օրը ընտրատեղամասերում իսկական պատերազմ էր սկսվում իշխանության ու ընդդիմության ներկայացուցիչների միջև:

Որպես հետևանք.

- ընդդիմադիրները մշտապես ծեծվել են և ունակ չեն եղել ընտրողների ձայներին “տեր կանգնելու” մասին իրենց կողմից տված խոստումը կատարել:

Մենք մերժում ենք այդ մոտեցումը ու հայտնում ենք, որ.

- մեր վստահված անձինք ընտրատեղամասերում ձեռնամարտի բռնվելու կարիքը չեն ունենալու:

Ավելին.

- հրահանգված է լինելու, որ Արման Մելիքյանի վստահված անձինք որևէ բանավեճի

մեջ չմտնեն ընտրահանձնաժողովների անդամների, իրավապահ մարմինների կամ ընտրախախտումներ իրականացնող անձանց ու խմբերի հետ:

Դրա փոխարեն.

- ընտրակեղծարարության փաստ արձանագրելու դեպքում նրանք պարզապես պետք է լքեն ընտրատեղամասը և այդ մասին հայտնեն Արման Մելիքյանի նախընտրական շտաբին, որը և կատարվածի մասին կիրազեկի և հանրությանը, և իշխանություններին՝ միաժամանակ.
- առոչինչ հայտարարելով տվյալ տեղամասում անցկացված ընտրությունների ցանկացած արդյունք:

<u>ԴՐՈՒՅԹ ՉՈՐՐՈՐԴ</u>

Մինչ այժմ ընդդիմությունը չէր ճանաչում իր կողմից առաջադրված թեկնածուի՝ իշխանության կողմից ընտրակեղծարարության արդյունքում գրանցված պարտությունը, իշխանությունն էլ ասում էր, որ ընդդիմության կողմից ընտրությունների արդյունքների մերժումը մեր քաղաքական մշակույթի տխուր առանձնահատկությունն է և լալահառաչ երազում էր այն օրվա մասին, երբ ընդդիմության “պարտված” թեկնածուն հրապարակավ կճանաչի իր պարտությունն ու կշնորհավորի հերթական անգամ “հաղթած” իշխանավոր կառավարիչին:

Մենք նոր իրավիճակ կձևավորենք նաև այստեղ: Մեր վստահված անձինք կլինեն ոչ թե նրան սատարող քաղաքական համախոհները՝ այլ հակառակորդ թիմերի ներկայացուցիչները:

Վստահված անձանց մանդատները տրվելու են.

- **ՀՀ իշխող Հանրապետական կուսակցության,**
- **“Օրինաց Երկիր” կուսակցության,**

երբևէ ղեկավար պաշտոններում չաշխատած բազմաթիվ ազնիվ ու սկզբունքային շարքային անդամներին, որոնց մասնակցությունը գործընթացին թույլ չի տա իշխանությանն ասել, թե իր դեմ են ելել քաղաքական հակառակորդները՝ ստի և կեղծիքի դեմ կելնեն իրենց իսկ կուսակիցները: Սա եզակի հնարավորություն կընձեռի շարքային կուսակցականներին ու համակիրներին իրենց ճշմարիտ գնահատականը տալ կուսակցական ղեկավարության պահվածքին և գործելակերպին:

Այսպիսով.

- **ընտրությունները խթան կդառնան ներկուսակցական կյանքի սկզբունքային բարենորոգման համար:**

Մենք ընտրությունների իրավաչափությունը որոշելու հարցում համագործակցելու հրավեր ենք հղում նաև արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, իրենց ազնվությամբ ու բարձր վարկով հայտնի գիտության, արվեստի, մշակույթի գործիչներին, հանրային սեկտորի ակտիվիստերին, երկրապահ կամավորականներին: Հենց այդ մարդկանց ենք վստահելու ընտրությունների անցկացման իրավաչափության գնահատումը և դրանց օրինական կամ անօրինական

որակելը:

ԴՐՈՒՅԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հայաստանում անցկացվող համապետական ընտրություններում կեղծարարության ամենաաղաղակող դրսևորումներից մեկն էլ եղել է .

- **զինծառայողների՝ իրենց հրամանատարների հրամանով պետության գործող ղեկավարի օգտին քվեարկելու պարտադրանքը:**

Այդօրինակ պարտադրանքը սպառնալիք է.

- **Հայաստանի ազգային անվտանգությանը,**
- **կազմալուծում ու բարոյազրկում է ՀՀ զինված ուժերը:**

Նման պարտադրանքի վերաբերյալ ցանկացած հավաստի տեղեկություն հիմք կդառնա ԶՈՒ ողջ անձնակազմի մասնակցությունը համարել առոչինչ, իսկ նրանց գլխավոր հրամանատար-թեկնածուի օգտին տված ձայների քանակը նվազեցնել հարյուր հազար քվեյով:

ԴՐՈՒՅԹ ՎԵՑԵՐՈՐԴ

Մինչ այժմ իշխանության լծակներին տիրապետող քաղաքական ուժերը, սովորաբար, չարաշահելով վարչական ռեսուրսը, իրենց շահերին էին ծառայեցնում.

- հանրային շենքերն ու շինությունները,
- իրենց օգտին քարոզչություն վարելու նախընտրելի պայմաններ ստեղծում,
- ընտրակաշառք բաժանում,
- բռնությունների ենթարկում ընդդիմության ներկայացուցիչներին:

Մենք հանրային աջակցությունն ենք ակնկալում այս կարգի չարաշահումների վերաբերյալ մեզ տեղեկատվություն հաղորդելու հարցում: Խախտումների մասին կիրազեկենք հանրությանն ու իշխանություններին, սակայն.

- **բողոքներով չենք դիմելու ՀՀ դատական մարմիններին, վերջիններիս կողմից արդարադատություն իրականացնելու անընդունակությունը հաշվի առնելով:**

Դրա փոխարեն.

- կսահմանվի խախտումների որոշակի ընդունելի չափաքանակ, որը գերազանցելու դեպքում ընտրությունները կորակվեն անօրինական:

Ընտրությունները չեղյալ և անօրինական կարող են համարվել դեռ մինչև քվեարկության օրը եթե խախտումների քանակն անցնի խելամիտ սահմանները:

Հանրությունն իշխանությանն այլևս ապացուցելու կամ համոզելու ոչինչ չունի՝ իշխանությունն է, որ պետք է որոշի՝ սեղմել մեկնած ձեռքը, թե կրկին հակադրվել արդարության ապահովման համընդհանուր պահանջին:

ԴՐՈՒՅԹ ՅՈԹԵՐՈՐԴ

Մինչ այժմ տեղի ունեցած բոլոր կեղծված ընտրությունները այս կամ այն չափով հավանության են արժանացել միջազգային դիտորդական առաքելությունների կողմից: Խառնիճաղանչ կազմ ունեցող միջազգային դիտորդական առաքելությունները չեզոքության պատրանք ստեղծելով փաստորեն աջակցել են ընտրակեղծարարներին ու դրանով նաև վերջիններիս վրա ներազդելու քաղաքական լծակներ տվել արտաքին շահագրգիռ ուժերի ձեռքը:

Այժմ մենք պետք է կարողանանք.

- առանց արտաքին "աջակցության" հաստատել մեր ընտրությունների անցկացման օրինականության աստիճանը:

Սա կլինի մեր իրական անկախությունն ապահովող կարևորագույն գործոն:

Մեր այս մոտեցումները պետք է դիտարկվեն ոչ թե որպես, սպառնալիք գործող վարչակազմին, այլ որպես ներազգային համերաշխությունն ու փոխվստահությունն ապահովող ծրագիր, որին կարող են իրենց մասնակցությունը բերել ՀՀ իշխանություններն ու ընդդիմությունը, մեր հանրության բոլոր խավերը, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի:

Մեր երկրում օրինական իշխանություն ձևավորելը հրամայական պահանջ է և բխում է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի շահերից:

Մի՛ լռեք

ՀՀ նախագահական ընտրություններ

2008 թվական, 19 փետրվարի

2013 թվական, 18 փետրվարի

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Նախագահի թեկնածու

ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, որտեղ իշխանությունը պատկանում է ԺՈՂՈՎՐԴԻՆ...:
- ՄԱՐԴԸ, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:
- Պետությունն ապահովում է ՄԱՐԴՈՒ և ՔԱՂԱՔԱՑՈՒ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
- Պետությունը սահմանափակված է ՄԱՐԴՈՒ և ՔԱՂԱՔԱՑՈՒ հիմնական

իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող ԻՐԱՎՈՒՆՔ:

- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության ԻՐԱՎՈՒՆՔԸ:
- Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:
- Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
- Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:
- Յուրաքանչյուր ոք ԻՐԱՎՈՒՆՔ ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:
- Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու ԻՐԱՎՈՒՆՔ:
- Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:
- Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության ԻՐԱՎՈՒՆՔ, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:
- Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:
- Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ԻՐԱՎՈՒՆՔ:
- Յուրաքանչյուր ոք ԻՐԱՎՈՒՆՔ ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:
- Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման ԻՐԱՎՈՒՆՔ: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:
- Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության ԻՐԱՎՈՒՆՔ:
- Յուրաքանչյուր ոք ունի կրթության ԻՐԱՎՈՒՆՔ: Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին

մասնակցելու ԻՐԱՎՈՒՆՔ:

- Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:
- Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:
- Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

Իրավունքի տեսանկյունից անդրադարձ կատարեցինք Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները կազմող որոշ դրույթներին, որոնք ընդունվել են համամարդկային արժեքների համակարգի շրջանակներում ինքնիշխան պետություն կառուցելու և նրա հզորացումն ու բարգավաճումը իրականացնելու, սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը ապահովելու նպատակով:

ՀԻՇԵ՛ՆՔ

Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: **Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս հասկացությունն իր մեջ ներառում է սոցիալական, տնտեսական, քաղաքացիական, քաղաքական, մշակութային և այլ իրավունքներ և ազատություններ, որոնք բնութագրում են անհատի իրավական կարգավիճակը պետության մեջ: Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և դրանց պաշտպանությունը հանդիսանում է նախ և առաջ պետության ներքին խնդիրը և կազմում են ազատության, արդարության և խաղաղության հիմքն աշխարհում:

ՊԵՏՔ Է ՉՄՈՌԱՆԱՆՔ ՆԱԵՎ

Ցանկացած իրավունք պայմանավորված է պարտականություններով: **Յուրաքանչյուր ոք ունի պարտականություններ այն հասարակության առջև, որտեղ հնարավոր է նրա անձի ազատ և լիարժեք զարգացումը:** Մարդը՝ իր իրավունքները և ազատությունները իրականացնելիս ենթակա է սահմանափակումների, որոնք սահմանված լինելով օրենքով՝ պիտի ուղղված լինեն բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելուն և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելուն:

ՀՀ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ՀԱՎԱՍԱ՞Ր ԵՆ ՕՐԵՆՔԻ ԱՌՋԵՎ
Մեր դեպքում պատասխանն ակնհայտ է՝ ոչ: **Մեզանում չկա օրենքի իշխանություն:**
Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ
Բոլորս: Մենք գրեթե ոչինչ չգիտենք մեր իրավունքների և ազատությունների, առավել ևս՝ պարտականությունների մասին:
Ո՞Վ Է ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ
ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ Հանրապետության Նախագահը պետության գլուխն է, որը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, երաշխավորում է Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը:
ԻՍԿ Ո՞Վ Է ԸՆՏՐՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ
ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից:
ՆԱԽԱԳԱՀԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է
Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:
ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, որտեղ իշխանությունը պատկանում է ԺՈՂՈՎՐԴԻՆ և որն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:
Մ'ԵՆՔ ՊԵՏՔ Է ԿԱՌՈՒՑԵՆՔ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
Մենք՝ ՀՀ քաղաքացիներս, պետք է գիտակցենք, որ յուրաքանչյուրս՝ իր կարողությունների չափով, պետք է ընդգրկված լինի մեր պետականության շինարարության, նրա կայացման և ամրապնդման գործում:
ԻՆՉԻ՞Ց ՄԿՍԵԼ
Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի շուտով ընտրելու է իր երկրի նախագահին, որը մոտակա հինգ տարիների ընթացքում կանգնած կլինի պետության ղեկին:

Յուրաքանչյուր քաղաքացի անկախ պետության մեջ գրված իր դիրքից և սոցիալական կարգավիճակից պետք է իրացնի սահմանադրությամբ ամրագրված իր իրավունքները և ինքը որոշի, թե նախագահի թեկնածու առաջադրված ՀՀ այս քաղաքացիներից որը կառաջարկի մեր հասարակության ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ բարելավելուն միտված առավել արդյունավետ միջոցառումներ:

Ի՞ՆՉ Է ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ

Տարբեր ոլորտների ժամանակակից հայեցակարգերում այսօր լայնորեն կիրառվող ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿ հասկացությունը իրենից ներկայացնում է սոցիալտնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարախոսական, բնապահպանական գործոնների, ինչպես նաև անհատի գոյության, մարդու հասարակության մեջ գրված դիրքի ամբողջություն: Դա հասարակության առանձին խմբերի ֆիզիկական, բարոյական, մտավոր և սոցիալական բարեկեցության պայմանների համակցությունն է, որում անհրաժեշտ հատկանիշների բացակայության կամ ձևավախախտման արդյունքում էլ ձևավորվում է ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ կոչվող երևույթը: Այն որպես կատեգորիա կազմավորվում է կյանքի տևողության կրճատմամբ, կրթության անհասանելիությամբ, աշխատանքային ակտիվության իրացման հնարավորության սահմանափակմամբ, որակյալ արտադրանքի և ծառայությունների, այդ թվում՝ բժշկական ծառայությունների անմատչելիությամբ, հասարակական կյանքից ազգաբնակչության լայն շերտերի մեկուսացմամբ:

ԻՄԿ ՈՐԱԿԸ

չափվում է գիտակցված կամ չգիտակցված, պայմանավորված կամ չպայմանավորված կամ նույնիսկ ամբողջովին սուբյեկտիվորեն շարունակական փոփոխության ենթարկվող պահանջներով: Ստացվում է, որ գիտակցված կամ չգիտակցված մեզանում առ այսօր սահմանվել կամ չեն սահմանվել պահանջներ, որոնք մեզ բերել են առկա անցանկալի ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ: Մեր պետության ազգային անվտանգության ռազմավարությամբ ամրագրված է, որ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՈՐԱԿ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության սոցիալական, գիտակրթական, հոգևոր-մշակութային ոլորտներում վարած քաղաքականությունը միտված է՝ սոցիալական պետության կերտմանը և սոցիալական արդարության արմատավորմանը, հանրային համերաշխության հաստատմանը, բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարմանը, սոցիալական ենթակառույցների ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովմանը, նոր աշխատատեղերի ստեղծմամբ ու ապահովագրական համակարգի ներդրմամբ՝ բնակչության սոցիալական վիճակի հարաճուն բարելավմանը, կենսաթոշակային համակարգի արդյունավետության մեծացմանը, կենսաթոշակի նվազագույն չափի համապա-տասխանեցմանը կենսաբանական պահանջմունքների միջազգային չափանիշներին, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, տնտեսության և հասարակության կայուն զարգացման համար անհրաժեշտ մասնագիտական աշխատուժի, մասնավորապես՝ գիտական և գիտամանկավարժական ներուժի վերարտադրությանը: Այսուհանդերձ, տարիներ շարունակ փորձում ենք հաղթահարել ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ և չենք հաղթահարում:

Ըստ էության, **մեր կյանքի որակի բարելավման մասին պնդումները խիստ չափազանցված են:**
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎՍ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ֆունկցիոնալ փոխկապակցված և փոխազդող տարրերի ամբողջականություն է, որն իրենից ներկայացնում է ամբողջական կազմավորում կամ էլ տիրապետում է ամբողջականության հատկանիշների: Ամբողջական է հանդիսանում այն կազմավորումը, որի մոտ բաղկացուցիչ տարրերի ֆունկցիոնալ փոխներգործության արդյունքում ի հայտ է գալիս նոր համակարգային հատկանիշ կամ համակարգային արդյունք: Յուրաքանչյուր համակարգ կառավարվում է ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ, որը կառուցված է համապատասխան քաղաքականության և նպատակների մշակման վրա, իսկ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ համակարգի ղեկավարման և վերահսկման բնագավառի համակարգված գործունեությունն է, ինչը որակի նկատմամբ կիրառելու դեպքում, բացի քաղաքականությունից և նպատակներից, ներառում է նաև սահմանված պահանջների կատարման պլանավորում, վերահսկողություն, ապահովում և բարելավում: Կառավարումը որակի նկատմամբ կիրառելի դարձնելու պարագայում միայն կկարողանանք ապահովել պետության արդյունավետ կառավարման համակարգի առկայություն, որտեղ հնարավոր կլինի խոսել հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՈՐԱԿԻ մասին: Պետության՝ ինչպես ցանկացած համակարգի արդյունավետ ղեկավարումը պահանջում է համակարգված և բաց կառավարում, որը կարող է ապահովել համապատասխան որակի ապահովման համակարգերի ներդրման միջոցով: Այդ համակարգերը պետք է միշտ լինեն աշխատանքային վիճակում և անընդհատ կատարելագործման ճանապարհով ապահովեն մարդու, քաղաքացու արժանապատիվ ապրելու հնարավորությունը, միտված լինեն հասարկության պահանջների բավարարմանը, երկրում առողջ բարոյահոգեբանական միջավայրի ստեղծմանը, որտեղ յուրաքանչյուր անհատ իրեն կզգա հասարակության լիարժեք անդամ, կկարողանա շահավետորեն օգտագործել իր ունակությունները և համապատասխան դրանց՝ կգրավի իր պատշաճ դիրքը հասարակության մեջ: Ցանկալի արդյունքների կարելի է հասնել գործունեության և համապատասխան ռեսուրսների կառավարմանը գործընթացային մոտեցում ցուցաբերելով: Սա նշանակում է բացահայտել բոլոր այն գործընթացների համակարգը, որն անհրաժեշտ է արդյունավետ կառավարումը իրականացնելու համար, սահմանել այդ համակարգում բոլոր գործընթացների հաջորդականությունը, փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը, ռազմավարական նպատակների և ծրագրերի տեսանկյունից որոշել առանցքային գործընթացները, գտնել այն անձանց, որոնք պատրաստ են իրենց վրա վերցնել դա իրականացնելու պատասխանատվությունը, տալ նրանց համապատասխան լիազորություններ, դարձնել նրանց այդ գործընթացի տերերը: Այնուհետև, որոշել գործընթացի գործունեության արդյունքների որակը, այսինքն՝ նկարագրել գործընթացի ելքը, հետո սահմանել գործընթացի մատակարարներին ու որոշել մուտքի տվյալները և գործընթացի արդյունավետ կառավարման չափանիշները, պլանավորել գործընթացի որակի չափանիշների և արդյունավետության գործընթացները, գործընթացի

փուլերի մուտքային և ելքային փաստաթղթերը, ապահովել գործընթացի արդյունավետ կառավարման և մոնիթորինգի համար տեղեկատվական հոսքը, վարել գործընթացային կանոնավոր գնահատում, մոնիթորինգ և տվյալների վերլուծություն: Անհրաժեշտ են պարբերական ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ՝ միտված գործընթացի նպատակների իրականացմանը և կարգի մշակում՝ գործընթացում փոփոխություններ մտցնելու համար: Որպես անփոփոխ նպատակ պետք է սահմանել կառավարման համակարգի անընդհատ բարելավումը, որը նախ և առաջ կախված է մարդուց, նրա անձնական որակների, գիտելիքների, հմտությունների և կարողությունների կատարելագործումից, մարդկանց խմբի թիմային աշխատանքի մեջ ներգրավվածության աստիճանից և համապատասխան բարոյահոգեբանական միջավայրի ձևավորումից: Եվ չպետք է մոռանալ, որ **ցանկացած ռազմավարության մեջ որոշումներ կայացնելիս պետք է հիմնվել միայն փաստերի վրա, քանզի արդյունավետ որոշումները հիմնվում են միայն հավաստի տվյալների և տեղեկատվության հիմնավոր վերլուծության և գնահատման վրա:**
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆՔ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Այսօր կայացրած մեր որոշումների արդյունքների հետ գործ են ունենալու մեր սերունդները: Ստանձնենք պատասխանատվության մեր մասը նրանց բարեկեցիկ կյանք ունենալու իրավունքը ապահովելու համար:
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
Մեր պետության ազգային անվտանգության հիմնարար արժեքներ են հռչակվում անկախությունը, պետության և ժողովրդի պաշտպանվածությունը, խաղաղությունը և միջազգային համագործակցությունը, հայապահպանությունը՝ Հայրենիքում և Սփյուռքում, բարեկեցությունը՝ կյանքի որակի ապահովմամբ: Անկախության արժեքին ծառայող հիմնական գործոնների շարքից առանձնանում է պետական կառավարման համակարգի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովման կարևորությունը, որը երկրի ազգային անվտանգության համար դառնում է լուրջ սպառնալիք, եթե այն՝ որպես այդպիսին ամբողջությամբ կոռումպացված է:
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ
Հայաստանում գործող կառավարման համակարգը մենք որակում ենք որպես կոռուպցիոն: Աշխարհի բոլոր պետություններն էլ ունեն այս կամ այն կառավարման համակարգը՝ միապետական, կղերական, ժողովրդավարական, բռնատիրական և այլն: Կառավարման համակարգի արդյունավետությունից է կախված ցանկացած պետության բարեկեցության մակարդակը: Կառավարման համակարգը պետք է պայմաններ ստեղծի երկրի բնակչության եկամուտների աճի և պետական բյուջեի միջոցների խելամիտ, նպատակային և վերահսկելի օգտագործման համար: Շատ չեն այն երկրները, որտեղ պետական կառավարման համակարգն այնքան կատարյալ է գործում, որ ի զորու է ապահովելու ժողովրդի բարձր կենսամակարդակը, իսկ կրթության, գիտության և արտադրության ոլորտների սերտ

համագործակցության շնորհիվ իրականացվում է առաջավոր, առավել արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում՝ ապահովելով այդ երկրների բացառիկ մրցունակությունը միջազգային շուկայում: Այդպիսի բարձր անդյունավետություն ունեն այն կառավարման համակարգերը, որոնք ապահովում են երկրում տնտեսական ազատ մրցակցային դաշտի առկայություն, գաղափարների ազատ արտահայտման հնարավորություն, անաչառ ու անկողմնակալ արդարադատության համակարգ: Հատկապես ժողովրդավարական իրենց հռչակող պետությունների պարագայում է, որ կարծես վերը թվարկված սկզբունքների հիման վրա գործող կառավարման համակարգերը տարբեր երկրներում տարբեր արդյունքներ են գրանցում: Կան երկրներ, որտեղ հռչակված ժողովրդավարական սկզբունքները հետևողականորեն կիրառվում են առօրյա կյանքում և կան այնպիսիները, որտեղ այդ սկզբունքները մնում են թղթի վրա՝ կյանքում չկիրառվող օրենքների և հռչակագրերի տեսքով: Այս վերջինները կարելի կոչել կեղծ ժողովրդավարության երկրներ, քանի որ այստեղ կառավարման ժողովրդավարական համակարգը ձևախեղվել է՝ դառնալով մարդկանց նեղ շրջանակի անձնական շահերը ապահովող մի գործիք, իսկ հանրությունը ի զորու չէ շտկել այդ ձևախեղումը, քանի որ չի տիրապետում համապատասխան գիտելիքների ու լծակների: Այս ձևախեղված «ժողովրդավարական» կառավարման համակարգը մենք կոչում ենք կառավարման կոռուպցիոն համակարգ: Այն կոռուպցիոն է քանի որ, մի կողմից քաղաքացին պետության հետ ունեցած իր շփումներում (անկախ ոլորտից) ստիպված է (աննշան բացառություններով) անօրինական հավելավճարումներ՝ կաշառք տալ համապատասխան պետական կառույցի ներկայացուցիչներին: Սա վերաբերում է արդարադատության, կրթության, սոցիալական ապահովության, առողջապահության ոլորտներին, հարկային և մաքսային մարմիններին և այլն: Մյուս կողմից պետական կառավարման համակարգի բարձր պաշտոնները վարող անձինք չարաշահելով իրենց պաշտոնեական դիրքը՝ հովանավորչությամբ և դրամաշորթությամբ ձևախեղում են երկրի տնտեսական ողջ ոլորտը՝ վերացնելով ազատ մրցակցության հնարավորությունը և ստեղծելով տնտեսության մենաշնորհային կառուցվածք: Վերջինս էլ բացառում է տնտեսության զարգացման, ուստի՝ և երկրի տնտեսական մրցունակության որևէ դրական հեռանկար: Շնորհիվ կառավարման կոռուպցիոն համակարգի երկրում խեղաթյուրվում է պետական ծախսերի կառուցվածքը, պետական ներդրումներ են կատարվում այնպիսի ոլորտներում, որտեղ մեծ են մեքենայությունների հնարավորությունները: Ի հաշիվ ստվերային տնտեսության երկրում զգալիորեն ցածր են հարկային եկամուտները: Բյուրոկրատական քաշքշուկից հոգնած ձեռնարկությունները մտնում են ստվեր և ավելի քիչ հարկեր վճարում: Սույնով վերջանում է օրենքի իշխանությունը և աճում է ստվերը, իսկ պետությունը, մենք բոլորս կրում վնասներ՝ դրանից բխող հետևանքներով: Այս ամենը ոչ միայն արգելակում է ձեռնարկատիրության զարգացումը, այլև շատ բացասաբար է ազդում հատկապես փոքր և միջին բիզնեսի վրա, որոնք հենց իրենց վրա են կրում կաշառքի ձևով «հարկի» ծանր բեռը: Իսկ ինչ վերաբերում է խոշոր, օլիգարխիկ ընկերություններին, ապա նրանք, որոնք այսպես կոչված մեծ կոռուպցիայի մեջ են ներգրավված, կարճ ժամկետներում կարողանում են ստանալ իրենց մասնավոր շահը, սակայն սա լուրջ խնդիր է հարուցում ինչպես ոլորտի այլ ձեռնարկությունների, այնպես էլ մեծ հաշվով՝ հասարակության համար:

Շատ կարևոր է տարբերակել կառավարման կոռուպցիոն համակարգը կոռուպցիա երևույթի

առանձին դրսևորումներից: Կոռուպցիան գոյություն ունի թերևս ողջ աշխարհում, սակայն իրապես ժողովրդավարական երկրներում կոռուպցիոն դրսևորումները ամենագործուն կերպով քրեորեն հետապնդվում են պետության և մերժվում ու դատապարտվում են հանրության կողմից: Այդպիսի երկրներում պետության և հանրության համակցված ջանքերի շնորհիվ իրապես գործում է հակակոռուպցիոն կանխարգելիչ և իրավական պատժիչ միջոցների մի զինանոց, ինչի շնորհիվ այնտեղ կառավարման կոռուպցիոն համակարգի ձևավորումն անհնար է: Կառավարման կոռուպցիոն համակարգը հարվածելով տնտեսության աճին և զարգացմանը՝ մեծապես նպաստում է աղքատության աճի վրա: Այն սահմանափակում է ազգաբնակչության աղքատ խավերի սոցիալական՝ այդ թվում առողջապահության և կրթության ոլորտի ծառայություններից օգտվելու հնարավորությունները: Պետության ենթակառուցվածքում կոռուպցիայով թելադրված ներդրումային շեղումները անտեսում են աղքատ ազգաբնակչության համար նախատեսված սոցիալական ապահովության ծրագրերը: Իսկ աղքատները, սոցիալական ապահովության ուղղվածություն ունեցող որևէ ծրագրում ներգրավված լինելու համար, հաճախ ստիպված են լինում կաշառք բաժանել:

Հայաստանում կառավարման կոռուպցիոն համակարգն արդեն իսկ ձևավորված է և գտնվում է իր զարգացման բարձրակետում: Դա կարող էր և տեղի չունենալ, եթե Հայաստանի նոր իշխանությունները ՀՀ անկախացումից ի վեր համապատասխան կանխարգելիչ գործողությունների միջոցով թույլ չտային պետական կառավարման համակարգի և բիզնեսի սերտաճում: Նման կանխարգելիչ միջոցառումներից մեկն էլ այն կլիներ, որ առնվազն որոշումներ կայացնող բարձրաստիճան պաշտոնյաների վարձատրությունը համարժեք լիներ իրենց զբաղեցրած բարձր պաշտոնների և կայացվող որոշումների բնույթից բխող բարձր պատասխանատվությանը: Ցավոք, ի տարբերություն, օրինակ, մերձբալթյան երկրների, Հայաստանը չընտրեց այդ ուղին: Չքավոր պետական պաշտոնյաները, օգտագործելով իրենց ձեռքի տակ եղած իշխանական լծակները սկսեցին աստիճանաբար ներքաշվել կոռուպցիոն գործընթացների մեջ՝ մեր պետությանը հասցնելով թե' նյութական, թե' բարոյական էական վնասներ: Մեր օրերում այդ չհամակարգված, առանձին կոռուպցիոն դրսևորումները «ստեղծագործաբար» զարգանալով վերաճեցին կառավարման կուռ և անհաղթահարելի թվացող կոռուպցիոն համակարգի:

Բացի նրանից, որ կառավարման կոռուպցիոն համակարգը մշտապես արգելակելու և խոչընդոտելու է երկրի տնտեսական առաջընթացը՝ պետական ազգային շահի փոխարեն սպասարկելով պետական կառավարման համակարգի բարձրագույն պաշտոնները զբաղեցնող անձանց շահերը, այն՝ այդ նույն մարդկանց է դարձնում իր պատանդը, թույլ չտալով վերջիններիս համակերպվել ընտրությունների միջոցով կատարվող օրինական իշխանափոխության մտքի հետ: Սրա պատճառն այն է, որ օրինական իշխանափոխությունը նշված անձանց զգալի մասին դուրս մղելով կառավարման համակարգից նաև կզրկի նրանց այն անօրինական լծակներից, որոնց միջոցով ապահովում էին իրենց նյութական բարեկեցությունը: Նրանք ունեն նաև լուրջ մտահոգություն կապված իրենց ունեցվածքը նոր իշխանությունների կողմից բռնազավթվելու իրական հնարավորության հետ:

Մենք վստահ ենք, որ օր առաջ պետք է ձերբազատվել կառավարման կոռուպցիոն

համակարգից և դա պետք է անել առանց բռնությունների դիմելու, առանց Հայաստանին նյութական և բարոյական վնասներ հասցնելու: Այս գործընթացն առավել կարևոր է նաև արտաքին հանգամանքների բերումով, քանի որ զուրկ լինելով ժողովրդի գործուն աջակցությունից պետական կառավարման կոռուպցիոն համակարգը չունի արտաքին մարտահրավերներին դիմակայելու պոտենցիալ: Իսկ դա ՀՀ-ն շատ խոցելի է դարձնում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հեռանկարի և միջազգային հարաբերությունների ոլորտում իրավահավասար ու փոխշահավետ գործընկերություն հաստատելու տեսանկյունից: Պետական կառավարման համակարգը, որի բաղկացուցիչներն են կազմում քաղաքացիական ազատությունները, մամուլի ազատությունը, քաղաքական կայունությունը, պետության գործունակությունը՝ քաղաքականության մշակման և պետական ծառայությունների մատուցման մասով, օրենքի իշխանության հաստատումը՝ ներառյալ սեփականության իրավունքի պաշտպանությունը և դատական իշխանության անկախությունը և որը վարակված է կոռուպցիայով՝ ուղղակիորեն ներազդում են մեր ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ վրա: Մարդկային, մտավոր ռեսուրսների սխալ տեղաբաշխման, ներքին և օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակի, ձեռնարկությունների խեղաթյուրված զարգացման և ստվերային, մենաշնորհային տնտեսության ընդլայնման, չարդարացված պետական ծախսերի և ներդրումների, ինչպես նաև շարքից դուրս եկած պետական ենթակառուցվածքների, ընտրախավի կողմից պետության օլիգարխիկ զավթման, պատվերով օրենքների և ռազմավարությունների մշակման ու ընդունման հաշվին կառավարման կոռուպցիոն համակարգը թուլացրել է պետությունը: Համաշխարհային փորձը գալիս է ապացուցելու, որ ուղղակի կապ գոյություն ունի կառավարման կոռուպցիոն համակարգի և քաղաքացիական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների, այդ թվում ազատ և անկախ ԶԼՄ-ների, խոսքի ազատության գոյության միջև: Ամուր է այն պետությունը, որը հուսալի և թափանցիկ գործիքների կիրառմամբ ապահովում է իր երկրի ազգային հարստությունը և սոցիալական նվաճումները, որն ունի ազնիվ պետական ինստիտուտներ, որոնք գործում են կարգավորման հստակ և պարզ սահմանված որոշումների հիման վրա՝ կիրառելով լավ մշակված մեխանիզմներ: Այդպիսի պետությունում, որպես կանոն, բոլորի նկատմամբ կիրառելի է օրենքը և պետության ռազմավարությունը ու արդարադատությունը զավթված չեն իր շահերը հետապնդող էլիտայի խմբավորումների կողմից և քաղաքացիական հասարակությունն ու զանգվածային լրատվության միջոցներն իրականացնում են իրենց ազատ ձայնի իրավունքը, ինչն ապահովում է հաշվետու իշխանության առկայություն: Թերևս, պետական կազմակերպության և ներպետական փոխհարաբերությունների այս կերպն է, որ կարելի է կոչել ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ:

Հաշվետու իշխանության առկայությամբ քաղաքացիական հասարակության մեջ ժողովրդավարությունը նախատեսում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանք, կյանքի անվտանգության ապահովում, քաղաքացիական և սոցիալական հանդուրժողականություն և համատեղելիություն, ինչպես նաև անհանդուրժողական վերաբերմունք անօրինականությունների և դրանց արդյունքում կիրառվող բռնությունների նկատմամբ:

Քաղաքացին պետության ինքնիշխանության անհատական աղբյուրն է և կրողը, այն տիրապետում է տվյալ քաղաքացիական հասարակության մեջ ճանաչված անհատական,

քաղաքական սոցիալտնտեսական հնարավորությունների ողջ համալիրի իրավունքին, իսկ պետությունը՝ այդ ինքնիշխանության կոլեկտիվ արտահայտողն է և պարտավոր է իրականացնել անհատի այդ հնարավորությունների ապահովումը, պաշտպանությունը և երաշխավորումը:
Ի՞ՆՉ ԱՆԵԼ
Պետական կառավարման կոռուպցիոն համակարգի բնույթը փոխելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ընդունել քաղաքական որոշում, որը կերաշխավորի այն ռազմավարության և մարտավարությունների իրականացումը, որոնք կսահմանափակեն տարատեսակ քաղաքական և պետական գործիչների սուբյեկտիվ գործողությունների և բյուրոկրատական ամենաթողության հնարավորությունը, կապահովեն ազգաբնակչության պաշտպանվածությունը և կբարձրացնեն քաղաքացիական հասարակության ներգրավվածության աստիճանը պետական կառավարման գործընթացներում, կնվազեցնեն էլիտայի խմբերի կողմից պետությունը զավթելու նկատմամբ շահագրգռվածության աստիճանը և կհաստատեն օրենքի իշանություն երկրում: Պետական պաշտոնյաների չարաշահումների արդյունքում ապօրինաբար յուրացված և շորթված գումարներն ու այլ արժեքները այլ անձանց միջոցով ու անվան տակ օգտագործումը կանխելու համար պարտադիր է իրականացնել երկրի բոլոր քաղաքացիների գույքի ու եկամուտների հայտարարագրում: Միայն այդ դեպքում շատ գործուն կարող են լինել քաղաքական գործիչների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց ազնիվ և արդյունավետ գործունեությունն ապահովող՝ նրանց գործողությունների, ֆինանսական միջոցների, եկամուտների և գույքի մասին թափանցիկ տեղեկատվություն տրամադրող կանխարգելիչ մեխանիզմի կիրառումը: Սա կարող է ներառել նաև քվեարկության ժամանակ օրենսդիր մարմնի պատգամավորների դիրքորոշման մասին տեղեկատվության բացություն, պատգամավորական անձեռնմխելիության վերացում, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրների և դրանց չափերի մասին տեղեկատվության մատչելիություն, պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախումները կանխարգելող դրույթներ: Կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ կարող է լինել նաև պետական ծառայողների անձնական հատկանիշների վրա պաշտոնական առաջխաղացումն ապահովելու համար նախատեսված թափանցիկ ինստիտուտների հաստատումը, որոնց անձնակազմերը համալրված կլինեն իրապես համապատասխան մասնագիտական որակներ ունեցող մարդկային ռեսուրսով: Յուրաքանչյուրի անձնական, մասնագիտական և բարոյական հատկանիշների վրա կառուցած մոտեցման կիրառումը կնախատեսի նաև համապատասխան գնահատման չափանիշների մշակում ու սահմանում և, որ ամենակարևորն է, կիրառում: Անձնական հատկանիշների վրա պաշտոնական առաջխաղացում ունեցած անձինք են, որ պիտի ձևավորեն պետական վստահելի և թափանցիկ ինստիտուտները, որոնք կունենան անհրաժեշտ իրազեկություն, որոնց համար կապահովվի համապատասխան ուսուցում կամ կնախաձեռնվեն այլ միջոցառումներ՝ իրենց առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման համար, որոնք տեղեկացված կլինեն իրենց գործունեության արդիականության ու կարևորության և այդ գործում իրենց ունեցած ավանդի նշանակության մասին, որոնց կրթության, պատրաստվածության, հմտությունների և փորձի մասին

կկատարվեն և կպահվեն համապատասխան գրառումներ: Այդպիսի ինստիտուտներում կգործեն կարգավորող մեխանիզմներ՝ լիազորությունների և պարտականությունների հստակ սահմանմամբ, բոլորի նկատմամբ կպահպանվի օրինականությունը, իսկ ռազմավարությունը և իրավաբանական բազան զավթված չեն լինի իրենց շահերը հետապնդող էլիտայի խմբերի կողմից: Այդ կապակցությամբ հիշենք, որ պետական կառավարման համակարգի արդյունավետությունը բարելավելու նպատակով Հայաստանում արդեն մի քանի տարի է, որ գործում է քաղաքացիական ծառայության ինստիտուտը, ինչն այդպես էլ չկարողացավ ապահովել քաղաքացիական ծառայության մասնագիտական աստիճանի պատշաճ մակարդակ:

Պարտադիր է պետական ծառայողների՝ այդ թվում նաև առանցքային պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատավարձի բարձրացումը, որը, սակայն, որպես առանձին միջոց կարող է արդյունավետ չլինել, եթե չուղեկցվի լրացուցիչ այլ միջոցառումներով:

Քաղաքացիական հասարակությունը և ԶԼՄ-ներն էլ պետք է ազատ, անկախ խոսքի իրավունք ունենան, ինչն իր հերթին կնպաստի իշխանությունների հաշվետու լինելու գործառույթին:

Պետական արդյունավետ կառավարման կարևորագույն տարր է պետական միջոցների բաշխման և օգտագործման մասին հաշվետու տեղեկատվական համակարգի առկայությունը: Գանձարանով չանցնող բյուջետային ծախսերը, արտաբյուջետային ֆոնդերի համատարած կիրառումը և բյուջետային միջոցների հատկացման նկատմամբ վերահսկողության գործուն համակարգերի բացակայությունը, պետական ծախսերի ռազմավարության հիմնական ուղղությունների մասին տեղեկատվության սակավությունը, ինչպես նաև պետական գնումների հետ կապված գործարքների առկայությունը լուրջ կոռուպցիոն գործոններ են հանդիսանում: Իսկ պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքի համար երկրում անհրաժեշտ է, որ գործեն իրապես անկախ աուդիտորական ինստիտուտներ:

Հայաստանում, ինչպես նախկին ԽՍՀՄ շատ հանրապետություններում, առկա է օրենքի իշխանության ճգնաժամ: Այնպես է ստացվել, որ նույնիսկ համապատասխան օրենսդրական, դատաիրավական համակարգի՝ ենթակառուցվածքի և մասնագիտական ռեսուրսի առկայության պայմաններում մեր երկրում ոչ մի կերպ չի հաջողվում հաստատել օրենքի գերակայություն: Խնդիրը նրանում է, որ մեզանում իրավաբանական հաստատությունները՝ զավթված լինելով քաղաքական էլիտայի կողմից, վերածվել են պետական կառավարման լրջագույն խնդիրների անբաժանելի մասի: Նման պարագայում անիմաստ է խոսել հակակոռուպցիոն օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, հրամանների և հրամանագրերի, ծրագրերի մասին, տեխնիկական աջակցության ցուցաբերման՝ բարձր տեխնոլոգիաներ ներդնելու ձևով, շենքերի և շինությունների կառուցման, դատավորների պատրաստման և վերապատրաստման ու փորձի փոխանակման միջոցով իրավիճակը բարելավելու մասին: Այս դեպքում ճիշտ կլինի ողջ հասարակության շրջանակներում կիրառել տեղեկատվության իշխանությունը՝ ԶԼՄ-ների ակտիվ ներգրավմամբ: Իրավական հատվածի զավթման դեմ պայքարում շատ գործուն կլինի քաղաքական մեխանիզմների կիրառումը:

Պետական կառավարման կոռուպցիոն համակարգի վերափոխման համար անհրաժեշտ է իշխանության բոլոր թևերի, քաղաքացիական հասարակության և գործարար համայնքի սերտ համագործակցությունը: Այս գործընթացում շատ կարևոր գործոն է քաղաքացիական հասարակության բարձր տեղեկացվածության հանգամանքը և գործընթացների թափանցիկության ապահովումը:

Ճշգրիտ և վստահելի ինֆորմացիայի տիրապետող քաղաքացիական հասարակությունը և թափանցիկության առկայությունը պետական կառավարման համակարգի բարեփոխման առանցքային բաղկացուցիչն է: Տեղեկացված և թափանցիկ պայմաններում գտնվող հասարակությունը ունակ է մասնակցելու պետական քաղաքականությունների մշակման գործընթացներին և հաջողությամբ մասնակցելու դրանց իրականացմանը: Եվ պետք է հիշել, որ պետական կառավարման բարելավմանը պետք է ցուցաբերել գործընթացային մոտեցում, որը նախ և առաջ նախատեսում է գիտելիքներ՝ համապատասխան հետազոտությունների և տվյալների վերլուծության առկայություն, ինֆորմացիոն ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով դրանց արդյունքների թափանցիկության ապահովում, որակի ապահովման ժամանակակից կառավարման համակարգերի առկայություն՝ քաղաքական, քաղաքացիական և միջազգային ոլորտներում, ինչպես նաև հասարակության բոլոր շահագրգիռ կողմերի շարունակական փոխհամաձայնեցված գործողությունների ապահովում՝ հանրային պատասխանատվության սահմանմամբ: Շատ կարևոր է, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամի անհատական նպատակները մեծ հաշվով համընկնեն պետության նպատակների հետ, որպեսզի հանրության յուրաքանչյուր անդամ անտարբեր չլինի պետության ճակատագրի նկատմամբ, որպեսզի ՀՀ և ոչ մի քաղաքացի չմտածի՝ լավ չի, ուրեմն գնալ է պետք այս երկրից և այդպես էլ անի՝ այլ պետություններում ներդնելով իր մարդկային և մասնագիտական կարողությունները, զուրկ լինելով քաղաքական և քաղաքացիական, ինչպես նաև մարդու շատ այլ իրավունքներից և հիմնարար ազատություններից:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ հիմնարար արժեք է հռչակվել բարեկեցությունը, որը նախատեսում է կայուն զարգացման միջոցով ՀՀ հասարակության համար ապահովել կյանքի բարձր որակ: Սակայն, կայուն զարգացումը նախ և առաջ արդար պայմաններում որակյալ առողջապահության ծառայություններից օգտվելու ու կրթություն ստանալու, անվտանգ և որակյալ սնունդ սպառելու, մաքուր և կայուն բնական միջավայրում ապրելու, անաչառ դատաիրավական համակարգ ունենալու, քաղաքացիական և քաղաքական իրավունքներից և ազատություններից օգտվելու, ինչպես նաև լիարժեք մշակութային կյանքով ապրելու հնարավորությունն է: Կայուն զարգացման հիմքում ընկած է, իհարկե, երկրի տնտեսական աճի ապահովումը, որում էական նշանակություն ունեն ոչ միայն այդ աճի աղբյուրները և տեմպը, այլև՝ դրա որակը: Զարգացման տեմպերի աճը, լինի դա արտահայտված նույնիսկ երկնիշ թվով, դեռևս չի նշանակում բարեկեցության աճ և պահանջում է այդ աճը որոշող գործոնների միջև գոյություն ունեցող կապի լուրջ վերլուծություններ: Մեր իրականության մեջ բազմաթիվ են օրինակները, երբ որպես զարգացման աճի ցուցանիշ են մատուցվել այն նախագծերն ու ձեռնարկումները, որոնք պետական միջոցների բաշխման չարդարացված շեղումներ են պարունակում և

ակնհայտորեն անտեսում են, օրինակ բնապահպանական խնդիրները, ինչն, ըստ էության, կայուն զարգացման լրջագույն խնդիր է: Մենք բացարձակ ուշադրություն չենք դարձնում այնպիսի կարևորագույն խնդիրների վրա, ինչպիսիք են՝ հնարավորությունների ճիշտ տեղաբաշխումը, բնական միջավայրի կայունությունը, կառավարման խնդիրները և դրանց վրա մեծ ազդեցություն թողնող տեխնիկական առաջընթացի արդյունքները: Երկրում զարգացման տեմպերի աճի ապահովման ոլորտում երբևէ պատշաճ ուշադրություն չենք հատկացնում մեկ ընդհանուրի մեջ գործող արտադրական, մարդկային և բնական կապիտալների միջև առկա կապին: Այսօր ակնհայտ է, որ մեզանում դրանց միջև գործող կապերը խեղված են, եթե չասենք, որ գոյություն չունեն: Մարդկային և բնական կապիտալների ճիշտ կիրառման ճանապարհով կարելի է նպաստել արտադրական կապիտալի կուտակմանը, որը ռիսկերի կառավարման և, ընդհանրապես, կառավարման համակարգերի ներդրման պայմաններում կապահովի զարգացման կայուն աճ, ինչն իր հերթին դրականորեն կներազդի բարեկեցության աստիճանի վրա:

Զարգացումը պայմանավորված է մարդկանց բարեկեցության աճով և նախատեսում է նրանց կողմից սեփական կյանքը ձևավորելու հնարավորություն: Այսօր, մեզանում հայտարարված տնտեսական աճը, որը պետք է որ լիներ մեր երկրի զարգացման հիմքում, այդպես էլ չի անդրադարձել մեր քաղաքացիների բարեկեցության վրա, քանի որ չի ուղեկցվել մարդկային ռեսուրսի, ինչպես նաև բնապահպանական ցուցանիշների զարգացմամբ: Մարդկային ներուժի զարգացման մեջ ներդրումային սխալ քաղաքականության, բնական միջավայրի՝ այդ թվում նաև բնական ռեսուրսների նկատմամբ անխնա վերաբերմունքի, ինչպես նաև ֆինանսական կամ արտադրական կապիտալի մեջ քաղաքական հովանավորչությամբ ներդրումային քաղաքականություն իրականացնելու արդյունքում մեր պետությունում այսօր ձևավորված իրավիճակը դժվար է զարգացում կոչել: Պետություն, որտեղ չի ապահովվում քաղաքացիների կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության և այլ խնդիրների լուծումը, չի կարող արձանագրել, որ ունի զարգացում: Մարդկային ներուժի զարգացումը չի կարելի ապահովել միայն դրանում պետական ծախսերի ավելացմամբ: Այստեղ շատ կարևոր է այդ հատկացումների կառուցվածքը՝ որակի և տեղաբաշխման առումով: Որակյալ կրթական համակարգը, որը ունակ է ապահովել զարգացած մարդկային ռեսուրսների առկայություն, մեծապես նպաստում է այդ արտադրական կապիտալի ձևավորման գործընթացում նրանց ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, ինչը նրանց հնարավորություն է տալիս իրենց համար ձևավորել համեմատաբար կայուն սոցիալական վիճակ: Այս ներգրավվածության աստիճանը բարձրացնելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է կրթության ոլորտում վարվող քաղաքականության հիմքում դնել արդարության սկզբունքը՝ հնարավորությունների արդյունավետ իրացման պայմանների ստեղծման, դրանք ապահովող ինստիտուտներում համապատասխան կառավարման համակարգերի ներդրման, ինչպես նաև աշխատանքի շուկայի ձևավորման և զարգացման ճանապարհով: Որակյալ կրթական համակարգն, օրինակ, չի կարող թույլ տալ, որպեսզի բարձրագույն կրթության ոլորտում պետական միջոցների հաշվին կրթություն ստանան սոցիալապես ապահովված այնպիսի անձինք, որոնց համար պետական պատվերով սովորելն ավելի շատ անձնական վարկի բարձրացման, քան կրթություն ստանալու խնդիր է:

Մարդկային ռեսուրսի զարգացումը ապահովում է քաղաքացիական հասարակության ձևավորման հնարավորություններ: Համապատասխան կրթական մակարդակ ունեցող անհատը ներգրավվում է մարդու իրավունքների ու սոցիալական արդարության հաստատմանն ուղղված գործընթացների մեջ, նա գիտի իր իրավունքների և ազատությունների մասին, անհրաժեշտության դեպքում ձեռնարկում է իրավական պայքար, ներգրավվում է հասարակական վերահսկողության գործընթացներում, իսկ սա իր հերթին նպաստում է պետական կառավարման համակարգի հաշվետու լինելու գործառույթի արդյունավետ իրականացմանը, համապատասխան ինստիտուտների ստեղծման և կոռուպցիայի դեմ պայքարին: Սակայն այս ամենն ունենալու համար, մենք դեռ պետք է ներդնենք այն կառավարման համակարգը, որի շրջանակներում իրականացվող քաղաքականությունը կապահովի հասարկության քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրացումը: Այդ իրավունքները նախատեսում են նաև մարդու կողմից որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն: Դրանով է մեծապես պայմանավորված հասարակության անվտանգության և հանրության առողջության պաշտպանության աստիճանը: Այսօր մեր երկրում պետական կառավարման համակարգի կողմից սոցիալական ապահովման տարբեր ոլորտներում վարվող քաղաքականության արդյունքում առողջապահության ոլորտում ստեղծվել է մի իրավիճակ, երբ չի ապահովվում հավասարություն, արդարություն, մատչելիություն և մատուցված ծառայությունների որակ բոլորի համար: Հասարակության լայն շերտերի համար որակյալ առողջապահական ծառայությունների անմատչելիությունը և նրանց իրական կարիքները չբավարարող առողջապահությունը թուլացնում են հասարակության շահերի պաշտպանությունը և անմիջականորեն դառնում ազգային անվտանգության հիմնարար արժեքների դեմ ուղղված ներքին սպառնալիք:

Այս սպառնալիքը ամրագրված է նաև մեզանում արտադրանքի և ծառայությունների որակի, այդ թվում դրանց անվտանգության ապահովման ոլորտում վարվող քաղաքականությամբ, որի արդյունքում հիմնականում տուժում են դարձյալ հասարակության սոցիալապես անապահով շերտերը, որոնք մեր հասարակության մեծ մասն են կազմում: Վճարունակության ցածր աստիճան ունեցող մեր հասարակության հիմնական մասը որպես կանոն օգտվում է էժանագին և ցածրորակ ու վտանգավոր սննդամթերքից, ինչն, ըստ էության, արտացոլում է երկրի սոցիալտնտեսական զարգացման առկա իրավիճակը և բնութագրում է մեր կյանքի որակը: Հենց մեր այս կյանքի որակով էլ բացահատվում է ոչ միայն հասարակության կենսագործունեությունը և կենսաապահովվածությունը, այլև որպես մի ամբողջական օրգանիզմ՝ նրա կենսունակությունը: Կենսունակությունը՝ ինչպես մարդու, այնպես էլ հասարակության սոցիալական, հոգևոր և կենսաբանական ֆունկցիաները առավել արդյունավետ իրականացնելու ունակությունն է: Այս համատեքստում հարկավոր է հիշել, որ որակյալ արտադրանք սպառելով, մարդը բավարարում է իր ֆիզիկական, մշակութային և այլ կարիքները, իսկ որակյալ արտադրանք և ծառայություններ ու աշխատանք ապահովելու ուղղությամբ ճիշտ վարվող քաղաքականությամբ պետությունը նպաստում է երկրի գիտատեխնիկական և արդյունաբերական զարգացմանը, հնարավորություն է ստեղծում ամրապնդել երկրի դիրքերը ինտեգրման փոխհարաբերություններում և ծավալել փոխշահավետ համագործակցություն: Երկրի պաշտպանունակության, նրա անկախության,

պետական և տարածքային ամբողջականության ապահովման գործում երաշխավորում է պաշտպանական գործառույթների, զինվորական ծառայությունների, կիրառվող տեխնիկայի և տեխնոլոգիաների հուսալիությունն ու արդյունավետությունը:

Որակի բնապահպանական բաղադրիչները կարևորագույն դեր են խաղում շրջակա միջավայրի պահպանության և առողջացման խնդիրների լուծման, երկրի և երկրագնդի բնապահպանական անվտանգությունն ապահովելու համար: Բնապահպանության և բնական ռեսուրսների պաշտպանության խնդիրները նույնպես հռչակված են ազգային անվտանգության հիմնարար արժեքների դեմ ուղղված սպառնալիք: Մեր ժամանակներում դժվար չէ գտնել այնպիսի վիճակագրական տվյալներ, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի անխնա շահագործման հետևանքով առաջացած հիվանդություններով տառապող կամ դրանցից մահացած մարդկանց թվաքանակին: Խոսքն առաջին հերթին վերաբերում է կանաչ տարածքների նվազեցման և արտադրական ներուժի ընդլայմնան հետևանքով թունավոր նյութերով աղտոտված մթնոլորտի և օգտագործվող ջրի վատ որակով հարուցված հիվանդություններին: Մեզանում լուրջ խնդիր է դարձել նաև բնական ռեսուրսների հաճախ չհիմնավորված, անխնա օգտագործումը, ինչը նույնպես վատ պետական կառավարման խնդիրներից է: Այս տեսանկյունից կարող է կիրառելի լինել բնապահպանական ոլորտում կառավարման միջազգային համակարգերի ներդրման պրակտիկան:

ՀՀ կայուն և անվտանգ զարգացում ապահովելու համար պահանջվում է պետական հստակ կառավարման համակարգի ներդրում, ինչն իր հերթին կնպաստի ժողովրդավարական արժեքների արմատավորմանը երկրում:

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության միջազգային կշիռը և ներգրավվածության մակարդակն ուղղակիորեն կախված են նրա տնտեսական, քաղաքական, ռազմաքաղաքական պոտենցիալից՝ այլ պետությունների կամ դրանց խմբավորումների համար տվյալ պետության հետ համագործակցությունից բխող օգուտների ծավալից: Սա կառուցողական հիմքի վրա ձևավորված համագործակցության արդյունք հանդիսացող պետության միջազգային կշիռը բնութագրող պայմանականորեն դրական պոտենցիալն է: Կարող է գոյություն ունենալ նաև պետության միջազգային կշիռը բնութագրող պայմանականորեն բացասական պոտենցիալ, որի հիմքում ընկած է քաղաքական կամ ռազմավարական ճանապարհով այլ պետությունների կամ պետությունների խմբերի՝ իրենց համար փոխշահավետ համագործակցությունը խոչընդոտելու, կանխելու հանգամանքը: Այս պոտենցիալները «դրական» կամ «բացասական» որակելը խիստ պայմանական է, քանի որ ժամանակակից աշխարհում խիստ մրցակցություն գոյություն ունի տարբեր պետությունների և դրանց խմբերի միջև: Հայաստանի Հանրապետությունը հումքի խոշոր արտահանող չէ, այն միջազգային շուկա չի արտահանում նաև ժամանակակից առաջադեմ տեխնոլոգիաներ ու սարքավորումներ, կամ որակյալ ծառայություններ, իսկ ներքին սպառման շուկան էլ շատ փոքրածավալ է, ուստի կարելի է ասել, որ ՀՀ միջազգային կշիռը տնտեսական առումով աննշան է:

ՀՀ միջազգային կշռի քաղաքական բաղադրյալը նույնպես ծանրակշիռ չէ, քանի որ երկրում

գործող կառավարման կոռուպցիոն համակարգը թույլ չի տալիս վստահությամբ վերաբերվել մեր պետությանը և հիմք է ստեղծում, որ խոշոր միջազգային դերակատարները դիտարկեն Հայաստանը ոչ թե որպես հավասար գործընկեր, այլ որպես իրենց քաղաքական շահերի տարածաշրջանային կամակատար:

Այլ է ՀՀ միջազգային կշիռը ռազմաքաղաքական բաղադրյալի տեսանկյունից: Այն շատ մեծ է հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի աշխարհաքաղաքական շատ բարձր արժեքի պատճառով: Սա, թերևս, երկրի միջազգային կշռի պայմանական «բացասական» պոտենցիալի դեպքն է: Այս որակումը պետք է ընկալել շատ գործնական և ռացիոնալ: Աշխարհի բազում պետություններ առհասարակ զուրկ են միջազգային կշիռ ունենալու որևէ պոտենցիալից: Մեր խնդիրն է օգտվել ՀՀ միջազգային կշռի ռազմաքաղաքական պոտենցիալից, խթանել նաև ՀՀ տնտեսական ու քաղաքական բաղադրիչների դրական արագ աճը: Որպեսզի կարողանանք դա իրագործել, պետք է հստակ պատկերացնենք ԼՂ հիմնախնդրի աշխարհաքաղաքական նշանակությունը միջազգային խոշոր և ազդեցիկ դերակատարների՝ Եվրամիության, ԱՄՆ-ի և Ռուսաստանի շահերի տեսանկյունից:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության համար օրախնդիր է ցանկացած գնով երաշխավորել Հարավային Կովկասով անցնող հաղորդակցության ուղիների, այդ թվում նավթամուղների ու գազամուղների անխափան աշխատանքը: Քանի լուծում չի ստացել ԼՂ հիմնախնդիրը և մեծ է պատերազմի վերսկսման վտանգը, Ռուսաստանը շրջանցող այդ հաղորդակցության ուղիները չեն կարող լինել վստահելի: Այս իրավիճակի շարունակական պահպանումը կհանգեցնի Եվրամիության՝ Ռուսաստանից կախվածությանը և վերջինիս կողմից վերահսկելի կդարձնի Եվրամիության Հարավ-Արևելյան Ասիայի աշխատանքի և ապրանքների սպառման շուկաների հետ կապ ունենալու համար անհրաժեշտ ցամաքային ուղիները: Այսինքն, Եվրամիությունը կհայտնվի իր տնտեսական զարգացումը և միջազգային կապերի հաստատումը սահմանափակող զսպաշապիկի մեջ: Այս վտանգն է ստիպում Եվրամիությանը ԼՂ հիմնախնդրի լուծումները փնտրել ոչ իրավական հարթության վրա՝ անտեսելով նաև ավելի քան կես միլիոն ադրբեջանահայ փախստականների ոտնահարված իրավունքներն ու շահերը, ԼՂՀ ժողովրդի անկախ պետություն կառուցելու կամքն ու նպատակը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ակնհայտ է, որ ԱՄՆ այսօր՝ ի դեմս Եվրամիության, ունի ոչ այնքան դաշնակից, որքան մրցակից՝ հատկապես տնտեսական ոլորտում: Եթե իրականություն դառնա Եվրամիությունն ու ավելի քան 3 մլրդ բնակիչ ունեցող Հարավ-Արևելյան Ասիայի տարածաշրջանն իրար կապող ցամաքային ապահով հաղորդակցության միջանցքի գոյությունը, ապա դա ուժեղ հարված կհասցնի ԱՄՆ միջազգային կշռին և կվտանգի այդ երկրի նյութական բարեկեցության հետագա աճը: Դրա հետ մեկտեղ, ԱՄՆ չի կարող հանդուրժել սեփական ազդեցության նվազումը Եվրամիությունում և վերջինիս՝ Ռուսաստանից կախվածության վտանգավոր աճը: Այդ իրավիճակից խուսափելու համար ԱՄՆ նախաձեռնել է Եվրամիությանը հումքային ռեսուրսներ մատակարարելու համար անհրաժեշտ մեկ

ուղղությամբ (Արևելք-Արևմուտք) գործող միջանցքի ստեղծում՝ հանձինս Բաքու-Ջեյհան նավթամուղի և համանման այլ նախագծերի: Այս մոտեցումը արդյունավետ է բացառապես ԼՂ հիմնախնդրում ստատուս-քվոյի պահպանման դեպքում:
ՌՈՒՍԱՍՏԱՆ
Եվրամիության հետ հարաբերություններում գերակա, թելադրող դիրք ձեռք բերելու տեսանկյունից Ռուսաստանի համար կարևոր է դեպի Եվրոպա և հակառակ ուղղությամբ տանող ու ՌԴ-ն շրջանցող հաղորդակցության ուղիների նկատմամբ իր կողմից վերահսկողություն սահմանելը կամ առհասարակ՝ այդպիսի ուղիների բացակայությունը: Այս տեսանկյունից ԼՂ հարցում առկա ստատուս-քվոյի պահպանումը Ռուսաստանի համար կենսականորեն կարևոր է:
Ի՞ՆՉ ԱՆԵԼ
Հայաստանն իր արտաքին քաղաքականությունը պետք է վարի ելնելով վերը ներկայացված իրողություններից, հաշվի առնելով ԼՂ հարցի կապակցությամբ միջազգային հիմնական ու մեր տարածաշրջանում ազդեցություն ունեցող դերակատարների միմյանց հակասող շահերը: Մենք պետք է նաև հիշենք, որ առկա ստատուս-քվոն խախտելու ՀՀ իշխանությունների փորձը անհաջողության է մատնվել ու առհասարակ հղի է վտանգավոր հետևանքներով: Պահպանվող ստատուս-քվոյի պայմաններում և ՀՀ-ում գործող կառավարման կոռուպցիոն համակարգի վերացման դեպքում Հայաստանը առաջարկելու բան կունենա բոլոր հիմնական դերակատարներին, միևնույն ժամանակ, իր միջազգային հարաբերությունների հիմքում ունենալով ինչպես սեփական պետության և ժողովրդի շահերի հստակ ձևակերպումը, այնպես էլ այլ երկրների շահերի հարգումը: Ստատուս-քվոյի պահպանման պայմաններում ՀՀ-ն ԼՂ հարցում ազատ է ձեռնարկելու երկրի տնտեսական, քաղաքական և ռազմական անվտանգությունն ու հետագա զարգացումն ապահովող հետևյալ առաջնային քայլերը. • դիմել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ադրբեջանահայ փախստականների խնդիրը բանակցային օրակարգում ներառելու առաջարկով, • անհրաժեշտ ճանաչել 1989թ. ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի կազմում ներառելու մասին որոշումը, • ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցային գործընթացում վերականգնել ԼՂՀ մասնակցությունը, • ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով ընթացող բանակցություններին զուգընթաց բանակցություններ սկսել ԼՂՀ-ի հետ վերջինիս անկախությունը ներկա սահմաններում ճանաչելու հարցով, • նույն ձևաչափով քննարկել նաև ՀՀ և ԼՂՀ միջև սահմանների ճշգրտման և դեմարկացիայի հարցը, • առաջարկել ԼՂՀ-ին որպես ադրբեջանահայ փախստականների կրած նյութական ու բարոյական վնասների մասնակի փոխհատուցում վերջիններիս տրամադրել

ազատագրված տարածքները՝ սեփականության իրավունքով,

- նպաստել ազատագրված տարածքների բնակեցմանն ու տնտեսապես շահավետ յուրացմանը,
- հանդես գալ Կարսի պայմանագրին նվիրված՝ այն ստորագրած պետությունների միջազգային համաժողով կազմակերպելու նախաձեռնությամբ:

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Իմ նախընտրական ծրագիրը միտված է առաջին հերթին լուծելու Հայաստանի Հանրապետության համար կենսական երկու հարց.

- **իրական ժողովրդավարական երկրին բնորոշ պետական կառավարման համակարգի ներդրում և.**
- **Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծմանը միտված պետական շահերից բխող ՀՀ ինքնուրույն արտաքին քաղաքականության մշակում և իրագործում:**

Վերոնշյալ առաջին խնդրի լուծումը հնարավորություն կընձեռի վերացնել իշխանության և գործարարության սերտաճման երևույթը, առավելագույնս կնպաստի ստվերային տնտեսության վերացմանը և տնտեսության մեջ իրական մրցակցային դաշտի ձևավորմանը: Սա թույլ կտա երկրում գործող պետական կառավարման կոռուպցիոն համակարգի կողմից ներկայումս ապօրինաբար յուրացվող միջոցները վերաուղղորդել նպատակային սոցիալական և զարգացման ծրագրերի իրականացմանը: Այսօր, նույնիսկ պաշտոնական տվյալների հիման վրա կարելի է պնդել, որ մոտ մեկ միլիարդ դոլարի չափ գումար մուտք չի գործում պետական բյուջե (խոսքը 2008թ. բյուջեի մասին է) և շրջանառվում է ստվերում: Այս գումարի հաշվին կարելի է.

- բարձրացնել պետբյուջեից աշխատավարձ ստացողների, այդ թվում նաև պետական ծառայողների աշխատավարձերը,
- ավելացնել թոշակներն ու նպաստները,
- աջակցել բնակչության նյութապես անապահով շերտերի՝ հաշմանդամների, փախստականների, ծայրահեղ աղքատների սոցիալական պայմանների բարելավմանը և ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքին,
- իրականացնել բարեփոխումների լիարժեք ու անընդհատ գործընթաց ՀՀ բանակում և այլ ուժային կառույցներում,
- պետական աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին և ԶԼՄ-ներին:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համատեքստում իրականացվելիք ՀՀ պետական շահերից բխող ինքնուրույն, նոր նախաձեռնություններ պարունակող արտաքին քաղաքականությունը, որը հաշվի կառնի նաև միջազգային խոշոր դերակատարների, ինչպես

նաև մեր անմիջական հարևանների շահերը, թույլ կտա Հայաստանի Հանրապետությանը որակական նոր կշիռ և դերակատարություն ունենալ միջազգային հարաբերությունների համաշխարհային համակարգում: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, մեր բոլոր հայրենակիցները պետք է վստահ լինեն, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ու վճռական իր բոլոր հնարավորությունները օգտագործելով պաշտպանել նրանց օրինական իրավունքներն ու շահերը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ աշխարհի ամենահեռավոր անկյուններում: Մենք կարող ենք վերահաստատել պետության ու քաղաքացու միջև ներկայումս խարխլված փոխվստահությունը և պարտավոր ենք դա անել, սակայն հաջողության հասնելու համար այլևս անհնար է սահմանափակվել միայն խոսքերով՝ Հայրենիքի նկատմամբ սեր խոստովանելով: Այդ սերը պետք է դրսևորվի ոչ թե բարձրագոչ կարգախոսներով, այլ սկզբունքային քաղաքացիական դիրքորոշմամբ ու դրանից բխող գործողություններով: